Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1072-18.01.2011,09.03.2011-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համահայկական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-30 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«3. Համահայկական բանկը.

ա. կարող է պարտատոմսեր և դեպոզիտային սերտիֆիկատներ տեղաբաշխել ոչ ռեզիդենտներին հրապարակային առաջարկի հիման վրա, իսկ ռեզիդենտներին՝ միայն ոչ հրապարակային առաջարկի հիման վրա: Ընդ որում՝ պարտատոմսերով և (կամ) դեպոզիտային սերտիֆիկատներով յուրաքանչյուր ռեզիդենտից ներգրավված միջոցների չափը պետք է ավելի լինի 100 միլիոն ՀՀ դրամից,

բ. չի վարում հաշիվներ և չի տրամադրում կարճաժամկետ վարկեր (սույն օրենքի իմաստով կարճաժամկետ վարկեր են համարվում 3 օրացուցային տարուց ոչ ավել ժամկետով տրամադրված վարկերը),

գ. տրամադրում է Հայաստանի Հանրապետության մասնավոր հատվածի մրցունակությունը բարձրացնելու և արտահանումը խթանելու համար երկարաժամկետ զարգացման վարկեր և/կամ ներդրումներ:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «գործադիր» բառից առաջ լրացնել «գլխավոր» բառը,

2) 10-րդ մասից հետո լրացնել 11-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝

«11. Համահայկական բանկի խորհրդի նախագահի և/կամ անդամի պաշտոնը կարող է համատեղվել Համահայկական բանկի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնի հետ:»:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Համահայկական բանկի» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Նախագծի վերաբերյալ առաջարկությունը	Եզրակացություն
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է: